

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԸ

ՊԼՏՄՈՒՄ Է ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ

Հայաստանում գիտությունը վարձանում է բուռն թափով: Ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի, բարձրագույն ուսումնական հաստատությունների, առանձին գերատեսչությունների սիստեմներում կազմակերպվում են հետազոտական նոր հաստատություններ, ընդլայնվում և խորացվում է հետազոտությունների բնատիկան, պատրաստվում են երիտասարդ կադրեր:

Որո՞նք են գիտության վարձացման հեռանկարները Հայաստանում: Այս հարցով ՀՀԳ-ի թղթակիցներ Ռ. Մելիքեթյանն ու Գ. Բենգյանը դիմեցին ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանին:

— Ներկայումս աշխարհը գիտական մտքի աննախադեպ առաջընթաց է ապրում,— ասաց Վ. Համբարձումյանը:— Արդի գիտելիքների կոմպլեքսով պինված մարդը թափանցում է Տիեզերքի անհունը և երկրի խորքը, բացահայտում է կյանքի անդձվածները և ստեղծում կիրճոնետիկայի շատ բարդ կայանքներ:

Համաշխարհային գիտության հետ համաքայլ են ընթանում նաև Սովետական Հայաստանի գիտականները: Մեր ռեսպուբլիկայում վարձացել և վարձանում են գիտությունների գրեթե բոլոր հիմնական ուղղությունները: Մեր գիտությունը հատկապես ինտենսիվ կերպով կարգադաս առաջիկա տարիներին:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հաստատությունների համար հիմնական ճյուղեր կդառնան ամենից առաջ մաթեմատիկան, մեխանիկան և կիրճոնետիկան: Ներկայումս այդ բնագավառի հետազոտությունները կենտրոնացված են մաթեմատիկայի ու մեխանիկայի ինստիտուտում, ինչպես նաև գիտությունների ակադեմիայի ու երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնում: Ենթադրվում է այս տարի այդ կենտրոնը վերածել կիրճոնետիկայի ինստիտուտի, իսկ 1966 թվականին Նախատեսվում է կազմակերպել մաթեմատիկայի և մեխանիկայի առանձին ինստիտուտներ:

Մոտ ժամանակներս երևանում կավարտվի էլեկտրոնային-հաշվողական նոր մեքենայի ստեղծումը, որը նախատեսված է լեզվական թարգմանությունների համար: Միաժամանակ հաշվողական կենտրոնում կշարունակվեն մաթեմատիկական նոր մեքենաների ստեղծման հետազոտությունները:

Հայ մեխանիկները կընդլայնեն առաձգականության և սողանի տեսության, անկոորդոպային թաղանթների և պլաստիկների տեսության ասպարեզի հետազոտությունները:

Նախատեսվում է ավելի խորացնել մեր մաթեմատիկոսների տեսական ուսումնասիրությունները: Այժմ նրանք պատրաստվում են ֆունկցիաների տեսության միջազգային գիտաժողովին, որը տեղի կունենա աշնանը Երևանում:

Երկրորդ կարևոր ուղղությունը Տիեզերքի հետազոտման հարցերն են, երկրային և արտամթնոլորտային աստղագիտությունը: Մենք առաջիկայում ևս համակողմանիորեն կուսումնասիրենք աստղային սիստեմներով զբաղակիրների միջուկները, նրանց բնույթը և նրանց մեջ կատարվող երևույթները: Այդպիսի աշխատանքներ կկատարվեն Բյուրականի աստղագիտաբանում: Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը կըշարունակի ռադիոաստղագիտական հետազոտությունների նոր ասպարտների մշակումը: Այստեղ լայնորեն կծավալվեն մեր արդյունաբերության համար չափազանց անհրաժեշտ կիսահաղորդչային էլեկտրոնիկայի գիտական հետազոտությունները: Ֆիզիկա-տեխնիկական կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիան 1967 թվականին կվերածվի ինստիտուտի: Նրա կոլեկտիվը ձեռնամուխ կլինի կարծր մարմնի ֆիզիկայի, ամենից առաջ պոլիմերների ֆիզիկայի և մետաղաֆիզիկայի բնագավառի աշխատանքներին: Դրանից բացի, եկող տարի նախատեսվում է Հայաստանում ստեղծել ճառագայթային ֆիզիկայի ինստիտուտ:

Նախատեսվում է 1967 թվականին նոր գիտական հիմնարկ կազմակերպել Լենինականում: Գիտական ապարատության այդ ինստիտուտը կբաղվի հետազոտությունների համար նախատեսված ամենաբավարար սարքերի, կայանքների, ասպարտների մշակման և ստեղծման աշխատանքներով:

Գրեթե մեկուկես տարի առաջ մեր ակադեմիայի սիստեմում կազմակերպվեց երկրագիտության բաժանմունք, որի մեջ մտան երկրաբանական գիտությունների, գեոֆիզիկայի և ինժեներային սեսյամոլոգիայի ինստիտուտները: Այդ հաստատությունների կոլեկտիվները հաջողությամբ ուսումնասիրում են մեր ռեսպուբլիկայի ընդերքը և բնության երևույթները:

Կոմպլեքսային հետազոտությունների հաջորդ ուղղությունը բնական և արհեստական նյութերի քիմիան է, ինչպես նաև նուրբ օրգանական սինթեզը: Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որի տրամադրության տակ է դրվել լաբորատորիաների լավ կահավորված կոմպլեքս, զբաղվում կընդլայնի ֆիզիոլոգիայի և ակտիվ

միացությունների, արժեքավոր բուժարեպարատների ստեղծման աշխատանքները: Ինստիտուտի փորձարարական արտադրամասում այս տարի կկազմակերպվի հայ գիտնականների մշակած պրեպարատների փորձնական արտադրությունը:

Մարդու և կենդանիների զբլխուղեղում տեղի ունեցող «գաղտնի» պրոցեսները հետազոտությունների նյութ են ծառայում բիոքիմիայի ինստիտուտի կոլեկտիվի համար: Քիմիական պրոցեսների ուսումնասիրմանը փոքր թիվ կենտրոնական նյարդային համակարգության գործունեության հիմքն են կասում, մեր գիտնականները մեծ ուշադրություն կնվիրեն գլխուղեղում արտադրվող օրգանական բարդ միացությունները վանական հիվանդությունների բուժման համար օգտագործելու ուղիների հայտնաբերմանը: Նոր կորպուսը, որ շուտով կտեղափոխվեն բիոքիմիկոսները, հնարավորություն կտա ընդլայնելու էքսպերիմենտալ աշխատանքները, լաբորատորիա-

(Հարուակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՉՈՆՆԵՐԸ

(Սկիզբ՝ 1-ին էջում)

ները պիտի ժամանակակից ապարատներով:

Օրգանական քիմիայի ինստիտուտը, ավելի, քան քիմիական գիտությունների բաժանմունքի մյուս հաստատությունները, պրակտիկ է ժողովրդական տնտեսության հրատապ հարցերով: Նախատեսվում է պրակտիկայի հետ այդ կապը հետազոտում ավելի ուժեղացնել: Ինստիտուտում ստեղծվել է այդօրինակ հետազոտությունների վարձագման տեսական հուսալիքալ: Մնում է միայն ցանկանալ, որ քիմիկոսների հետազոտություններն ավելի արագ տեսնվեն արմատավորվեն արդյունաբերության մեջ:

Այժմ այս պրոցեսի մեխանիկի բացահայտման հետաքրքրական աշխատանքներ են տարվում քիմիական ֆիզիկայի լաբորատորիայում: 1968 թվականին լաբորատորիայի բազայի վրա կկազմակերպվի գիտահետազոտական ինստիտուտ, որի աշխատողները կբարավորեն քիմիական պրոցեսների կինետիկայի հարցերով:

Հրատապ լուրջ ինդիքներ են ծառայած կենսաբանների առջև: Հայրենական կենսաբանական գիտության մի քանի բաժիններում տիրող լճացումից հետո պետք է առանձնապես շատ ջանքեր թափել կենսաբանության չափազանց կարևոր, սակայն վերջին երկու

տասնամյակներում աջաթող արված ուղղությունների արագ վարձագման համար: Բուսաբանության և կենդանաբանության ինստիտուտները այդ դիրքերից ձեռնամուխ կլինեն հետազոտություններին: Այդ հաստատությունները, որոնց աշխատանքի վզալի մասը կապվում է Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրումը, ավելի ակտիվորեն կբարձրեն նաև կենսաբանական գիտության ընդհանուր հարցերով: Դա որոշակի չափով վերաբերում է նաև մեր ֆիզիոլոգներին, որոնք ուղղությունը պետք է կենտրոնացվի ինչպես մարդու և կենդանիների օրգանիզմների կառուցվածքի ու ֆունկցիոնալ գործունեության ուսումնասիրման վրա, այնպես էլ գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացման կենսաբանական հիմունքների վրա:

Վերջին տարիներս որոշ չափով փորձվել է միկրոկենսաբանության ինստիտուտի արթոֆիլը: Այստեղ սկսել են պարզվել միկրոօրգանիզմների արժեքավոր կերի և սննդանյութերի ստացման համար օգտագործելու հարցերով: Այդ ուղղությունը կպարզանա նաև առաջիկայում:

Կենսաբանական գիտությունների բաժանմունքում մոտ տարիներս նախատեսված է կազմակերպել մի շարք նոր ինստիտուտ-

ներ և լաբորատորիաներ: Արդեն այս տարի ագրոքիմիայի լաբորատորիայի բազայի վրա կստեղծվի ագրոքիմիական պրոլեմների և էկոլոգիկիկայի ինստիտուտ, իսկ շրջապիմենտալ կենսաբանության լաբորատորիայի բազայի վրա՝ հետակա ինստիտուտ: Գիտության նորագույն ուղղությունների հարող վարձագման նպատակով որոշվել է երևանում կազմակերպել քիմիկիկայի և նեյրոքիմիկայի ինստիտուտ, ճառագայթային զենետիկայի լաբորատորիա և իզոտոպների կենտրոնական լաբորատորիա:

Ռեսուրսիկայի կառավարությունը լուրջ միջոցներ է ձեռնարկում Հայաստանի լճային տնտեսությունը վարձագցնելու ուղղությամբ: Աստուցվող ջրամբարներում և արհեստական լճերում ստրուկտուր վարձագցնելու ուղղությամբ: Աստուցվող ջրամբարներում և արհեստական լճերում նախատեսվում է լայնորեն կազմակերպել ձկնաբուծությունը: Այդ պրոլեմի լուծմանը պետք է ակտիվորեն մասնակցեն Սևանի ջրակենսաբանական կայանի աշխատողները: Նրանք միաժամանակ կշարունակեն Սևան լճի ձկան պահպանմանը պահպանելու և մեծացնելու ուղիների ուսումնասիրությունը:

Ապոգիմիայի սխտեմում մոտ տարիներս պետք է վարձանեն հետազոտությունների 9 հիմնական ուղղություններ, որոնցից երկուսը վերաբերում են հասարակա-

կան գիտություններին: Հնարավորին չափ ավելի լայնորեն կարգանան հասարակական գիտությունների հետազոտությունների քանակական մեթոդները: Խոսքը վերաբերում է տնտեսագիտության, լեզվաբանության, հնագիտության, սոցիոլոգիայի բնագավառում ճշգրիտ գիտությունների, այդ թվում՝ կիրենետիկայի և էվոլյուցիոնային հաշվողական տեխնիկայի մեթոդների կիրառմանը: Երկրորդ ուղղությունը հայագիտությունն է, որը պետք է ավելի հիմնուհիվ կերպով պարզանա: Առաջիկա երկու տարում հասարակական գիտությունների բաժանմունքում կստեղծվեն արևելագիտության և փիլիսոփայության ու իրավունքի ինստիտուտներ:

Մյուսը են Հայկական ՍՍԻՊ գիտությունների ակադեմիայի առաջիկա աշխատանքի միայն մի քանի ավելվածները: Կարծում են, իր խոսքն ավարտեց Վ. Համբարձումյանը, որ այս բոլոր խնդրերի հաջող լուծումը մեր գիտնականներին հնարավորություն կընձեռնի նոր, մեծ հաջողությունների հասնելու իրենց գործունեության մեջ, ավելի ակտիվորեն անջակցելու ռեսուրսիկայի ժողովրդական տնտեսության վարձագմանը: